Աշխատանքի ծածկագիր 1164

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ք.Երևան 16.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա. Մարգարյանի
մասնակցությամբ անդամներ՝
Ա. Մելիքսեթյանի
Հ. Մանուկյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել է տարբերակ 6-ի նյութական իրավունքի բաժնի 7"61-րդ, 10"45-րդ, 13"9-րդ, 22" 47-րդ 31"64-րդ, 33"46-րդ հարցերը,

61-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի կողմից սխալ է մեկնաբանվել քրեական օրենքի գործողության սկզբունքները, հավակնորդի կողմից մեջբերված դրույթները վերաբերելի են ըստ տարածության քրեական օրենքի գործողության սկզբունքին, ընդ որում հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ հանցանքը կատարվել է օտարերկյա քաղաքացու կողմից ՀՀ-ից դուրս օտարերկյա քաղաքացու նկատմամբ, հետևաբար ներկայացված դրույթը և դրանցից բխող եզրահագումները ընդունելի չեն, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

45-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի են, ուստի տրվում է 1 միավոր:*

9-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, խիստ թերի են ինչը հնարավորություն չի տալիս ուղեցույցում նշված ճիշտ տարբերակից շեղվող տարբերակը ճիշտ համարելու համար: Հավակնորդի կողմից ներկայացված հիմնավորումներից հասկանալի չէ, թե ինչու է ընտրվել դ/ տարբերակը՝ յուրացում և յուրացման օժանդակություն: Հետևաբար գնահատականը չի բարձրացվում:*

47-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի կողմից մեջբերված դրույթները չեն բխում փաստական սխալի պարագայում արարքի որակման կանոններից, սխալ է կիրառվել նաև իդեալական համակցության պարագայում արարքի որակման կանոնները, հետևաբար ներկայացված դրույթը և դրանցից բխող եզրահագումները ընդունելի չեն, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

64-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, քանզի այդ հիմնավորումները չեն բխում իր իսկ կողմից մեջբերված ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումներից, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

46-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները բխում է քրեական իրավունքի տեսության փաստական սխալի պարագայում արարքի որակման կանոններից, ուստի տրվում է 1 միավոր:*

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ***1164*** ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակիորեն" նյութական իրավունքից ստացված 20 միավորը բարձրացնել 2 միավոր՝ արդյունքում արձանագրել 22 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ